

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Մանդային աջակցություն Արցախից տեղահանված խոցելի անձանց՝ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Իզմիրյան Բարեգործական Հիմնադրամ ՀՄԻ (Հասցե՝ Մելիք Ադամյան 2/1, 0010 Երևան, ՀՀ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	14,648,250 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1,850 սոցիալապես խոցելի արցախցիներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	11.03.2021 թ. – 30.04.2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Պարենային միասնական զամբյուղի կազմում՝ համաձայն մեկ անձի համար անհրաժեշտ կալորիաների ընդունման հաշվարկի, պարենային զամբյուղների ձեռքբերում, սննդամթերքի փաթեթների բաշխում շահառուներին: Ժամանակահատված՝ 11.03.2021 թ. – 30.04.2021 թ. Բյուջե՝ 14,648,250 դրամ՝ այդ թվում պարենային ապրանքների և տոպրակների ձեռքբերում՝ 13,403,250 դրամ, բեռնափոխադրման ծախսեր՝ 835,550 դրամ և կազմակերպական ծախսեր՝ 409,450 դրամ :

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Սննդի ձեռքբերում/ գնումների կազմակերպում, տեսակավորում, պահեստավորում, որի գումարը կազմում է 13,218,250 դրամ 2. Փաթեթավորման համար պոլիէթիլենային տոպրակների ձեռքբերում 185,000 դրամ 3. Բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 835,550 դրամ 4. Բենզինի ձեռքբերում՝ 378,000 դրամ 5. Տեսանելիության ապահովման նյութերի՝ լոգոների տպագրում՝ 31,450 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսը կազմում է 409,450 դրամ և իր մեջ ներառում է մոնիտորինգային այցերի համար բենզինի ձեռքբերում՝ 378,000 դրամ և տեսանելիության նյութերի տպագրություն՝ 31,450 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ մարզերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ավարտական հաշվետվություն «Իզմիրյան» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ